


Երեխաներու հետ  
փիլիսոփայելու համար  
գաղափարներ՝



#դպրոց


փիլիսոփայություն







Նախ հարցուցեք՝  
«Ըստ քեզի ինչի՞ կը ծառայէ  
դպրոցը:»






Քննարկումը  
զարգացնելու համար,  
նաեւ հարցուցէք  
հետեւեալները  
եւ նման այլ հարցումներ՝




Կրնա՞նք ամեն բան դպրոցը սորվիլ:

Կա՞ն բաներ որ դպրոցէ դուրս սորվեր ես: Կրնա՞յիր անոնք դպրոցը սորվիլ:



Կրնա՞ն ուսուցիչները ամեն  
բան գիտնալ:


Ուսուցիչները կրնա՞ն  
աշակերտներին սորվիլ:



Կա՞ն բաներ որ դպրոցը  
կրնաս ընել, բայց՝  
ոչ դպրոցէն դուրս:


Կա՞ն բաներ որ դպրոց  
սկսելէ ետք մոռցած ես:





Դպրոցը միայն բաներ մը  
սորվելու համար է:

Մէկ հոգինոց դպրոց մը  
կարելի է երեւակայել:




Դպրոցիդ մեջ ի՞նչ  
կ'ուզեիր փոխել:  
Կրնա՞ս դուն ըլլալ  
փոխողը:

Եթէ դուն դպրոց մը  
ստեղծեիր, ինչպէ՞ս կ'ըլլար:



Մի՛ մոռնաք որ  
երեխաներու հետ  
փիլիսոփայելու նպատակը  
«ճիշդ պատասխան»ը  
փնտռել չէ, այլ՝ վարժեցնել է  
ճիշդ ձեւով միտք բանեցնելու:



Նման աշխատանքներու  
համար կրնաք այցելել  
փիլիպարտէլիս  
կայքէջը:

